



Վանաձորի համայնքը (այսուհետ՝ Համայնք), ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանի, մի կողմից, և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գործատուների Միություն Հասարակական միավորումը (այսուհետ՝ ԼՄԳՄ), ի դեմս նախագահ Ահարոն Մակարյանի, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

1. Հուշագրի նպատակը

Վանաձորի համայնքապետարանը և, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գործատուների Միությունը ՀՄ-ը նկատի ունենալով՝

- Վանաձոր համայնքում բիզնես միջավայրի բարելավման կարևորությունը,
- Գիտակցելով բիզնես համայնքի և գործատուների շահերի պաշտպանության անհրաժեշտությունը,
- Արտահայտելով տնտեսական աճի և բարեկեցության ոլորտում արդյունավետ համագործակցության փոխադարձ ձգտումները.

Արտահայտում են միմյանց հետ համագործակցելու պատրաստակամություն և ձգտումներ, համայնքում բիզնես միջավայրի բարելավման նպատակով ծրագրերի արդյունավետ իրականացման համար:

2. Համագործակցության ուղղությունները

- ✓ Հանրային իրազեկվածության բարձրացում
- ✓ Բիզնես միջավայրի բարելավում
- ✓ Բիզնես համայնքի և գործատուների շահերի պաշտպանություն
- ✓ Համայնքի տնտեսական աճ
- ✓ Արտաքին տնտեսական կապերի բարելավում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

- ✓ Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար:
- ✓ Կողմերը պայմանավորվում են համագործակցել սույն հուշագրով սահմանված պահանջներին համապատասխան, Կողմերի համար ընդունելի ձևաչափով, հուշագրում նշված նպատակների իրականացման համար:

4. Տարաձայնությունների կարգավորումը

Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանումից կամ կիրառումից ծագող բոլոր տարաձայնությունները Կողմերի միջև կարգավորվում են բարեկամաբար, բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

5. Փոփոխությունները և լրացումները

Սույն Հուշագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Համաձայնությունն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելուց հետո և կազմում է սույն Հուշագրի անբաժանելի մասը:

6. Այլ դրույթներ

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից: Հուշագիրը կարող էր ադարեցվել Կողմերից որևէ մեկի կողմից՝ այդ մասին գրավոր ծանուցելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Հուշագիրը դադարեցնելու դեպքում Կողմերը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն, որպեսզի արդեն իսկ սկսված միջոցառումներն արագ և կանոնավոր ավարտվեն:

7. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Կողմ 1

Կողմ 2

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԼՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. ՎԱՆԱՁՈՐ, ՏԳՐԱՆ ՄԵԾԻ 22
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՀՀ, ք. ՎԱՆԱՁՈՐ, ՏԳՐԱՆ ԳՈՇԻ 7
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՄԱԿԱՐՅԱՆ

Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՄԱԿԱՐՅԱՆ

